ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 115

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ*

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոց N 54/2 հասցեում գտնվող 01-007-0282-0290 կադաստրային ծածկագրով 0.006 հա մակերեսով բուֆերային գոտի (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հող) | Երևան քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոց N 54/2 հասցեում գտնվող 01-007-0282-0290 կադաստրային ծածկագրով 0.006 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների էներգետիկայի հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Երևան քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող* | | |
| | [signature] | Դ.Գրիգորյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | [signature] | Հ. Դավթյան |

Երևան, «19» «մարտի» 2024 թ.